ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի հոկտեմբերի 17-ից 21-ը
Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Լիլիթ Մովսիսյան, Միեր Մարտիրոսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Վարչարարության մեթոդաբանության վարչության պետի տեղակալ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Մաքսային հսկողության վարչության պետի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, ս.թ.հոկտեմբերի 17-ից 21-ը

4. Հրավիրող կողմը՝

Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Եվրասիական տնտեսական միության մաքսային կարգավորման կատարելագործման հարցերով աշխատանքային խմբին կից փորձագիտական խմբի 48-րդ նիստի ընթացքում քննարկվել է ԵԱՏՄ մաքսային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության նախագիծը կազմելու համար շրջանառության մեջ դրված առաջարկությունների մի մասը՝ ըստ կից նեկայացվող օրակարգի:

6. Քննարկված թեմաները՝

Եվրասիական տնտեսական միության մաքսային կարգավորման կատարելագործման հարցերով աշխատանքային խմբին կից փորձագիտական խմբի

48-րդ նիստի ընթացքում քննարկվել է ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի փոփոխությունների և լրացումների մաս կազմող հարցերի առաջնահերթ հարցերի 1-ին փաթեթը, որը ներառում է՝ բեռնարկղերի հայտարարագրմանը, «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի ոչ իրավաչափ եզրափակմանը, «ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով ապրանքների մասնակի պայմանական ազատմամբ ձևակերպելիս մաքսատուրքերի և հարկերի հաշվարկին, սուբյեկտների կողմից ներկայացված նախնական տեղեկատվության՝ բացթողմանն ուղղված գործառնությունների նպատակով այլ փուլերում օգտագործման հնարավորությանը, տեղորոշման կապարակնիքների՝ մաքսային հսկողության իրականացման նպատակներով օգտագործմանը և մի շարք այլ կարգավորումներին վերաբերվող հարցեր: Բոլոր հարցերի վերաբերյալ իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը՝ այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության փորձագետների կողմից արտահայտած դիրքորոշումները ներկայացված են ԵՏՀ կողմից ձևավորված աղյուսակում և նյութերում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հանդիպումները տեղի են ունեցել ամեն օր ս.թ. հոկտեմբերի 17-21-ը ժամը 10-18-ը: Բանակցություններին ներկայացված են եղել ԵԱՏՄ բոլոր պետությունների փորձագետները, ինչպես նաև ՌԴ, Ղազախստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության գործարար շրջանանակների ներկայացուցիչները՝ ըստ անհրաժեշտության:

Փորձագիտական խմբի հարթակում ներկայացվել են քննարկվող հարցերի վերաբերյալ ՀՀ փորձագետների պարզաբանումները, դիրքորոշումները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Փորձագիտական խմբի նիստի արդյունքներն ամփոփվել են արձանագրությամբ, որում ամփոփվել են քննարկվող հարցերի վերաբերյալ կողմերի մոտեցումները, դիրքորոշումները, ինճպես նաև համաձայնեցված և վիճելի հարցերը:

Փորձագիտական խմբի 48-րդ նիստի ավարտին ձեռք է բերվել նախնական պայմանավորվածություն՝ ԵԱՏՄ մաքսային օրենսգրքում կատարվելիք փոփոխությունների քննարկումը շարունակել նոյեմբեր ամսվա երկրորդ կեսում կայանալիք փորձագիտական խմբի հաջորդ նիստի ընթացքում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

ԵԱՏՄ մաքսային օրենսգրքում փոփոխություններ կատարելու ուղղությամբ աշխատանքները շարունակվում են: Եվրասիական տնտեսական միության մաքսային կարգավորման կատարելագործման հարցերով աշխատանքային խմբին կից փորձագիտական խմբի՝ օգոստոս ամսին կայանալիք 49-րդ նիստի շրջանակներում անդամ երկրների փորձագետները կքննարկեն առաջարկությունների հաջորդ փաթեթը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

25.10.2022թ